Շուշան Խաչատրյան[1]

Մ. ԱՈՒԵԶՈՎԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1917-1920-ԱԿԱՆՆԵՐԻՆ

Բանալի բառեր՝ *Մուխթար Աուեզով, ղազախ գրականություն, հասարակական գործունեություն, քաղաքական գործունեություն, ազգային գաղափարներ*

Ղազախ գրականության մեջ արձակի զարգացումն ու կատարելագործումը կապված է Մուխթար Աուեզովի անվան հետ: Սակայն գեղարվեստական ստեղծագործություններ գրելուն զուգահեռ Մուխթար Աուեզովը զբաղվել է նաև հասարակական-քաղաքական գործունեությամբ: Նրա այս գործունեությամբ է պայմանավորված 1920-ականների ստեղծագործությունների հիմնական թեմատիկան և կերպարների ընտրությունը: Ավելին, Մ. Աուեզովի ստեղծագործական կյանքում քիչ չեն դեպքերը, երբ հեղինակը ստիպված է եղել բազմիցս անդրադառնալ կոնկրետ ստեղծագործությունների և դրանցում կատարել «շտկումներ», սակայն այդ փաստն անգամ նրան չի փրկել ազատազրկումից և քաղաքական հետապնդումներից:

1920-ականներին բուռն անձնական կյանքին զուգահեռ[2] Աուեզովը զբաղված էր նաև հասարակական-քաղաքական գործունեությամբ՝ անմասն չմնալով այն փոփոխություններին, որոնք տեղի էին ունենում խորհրդայնացող Ղազախստանում[3]: Բնական է, որ այս շրջանում երկրի հասարակական-քաղաքական կյանքում կատարվող փոփոխություններն անդրադառնում էին ղազախ ժողովրդի կյանքի բոլոր բնագավառների վրա: Իր կյանքի այս շրջանի մասին հետագայում հեղինակը գրում է. ‹‹Իմ կյանքի ընթացքում ես անցա երեք հասարակական փոփոխությունների

---

[1] ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի դասախոս, էլ. փոստ՝ shush.khachatryan@paara.am

[2] Աուեզովն ամուսնացած է եղել երեք անգամ. 1917 թ. նա ամուսնանում է Ռայիսա Կեկենքզզի հետ: Համատեղ կարճատև կյանքի ընթացքում նրանք ունենում են մեկ դուստր՝ Մուգամիլան, և որդի՝ վաղամեռիկ Շոկանը: Երկրորդ անգամ Աուեզովն ամուսնանում է 1920 թ., սակայն այս ամուսնությունը ևս երկար կյանք չի ունենում: 1923 թ. Լենինգրադում (Ս. Պետերբուրգում) սովորելու տարիներին նա ծանոթանում է ազգությամբ ռուս Վալենտինա Կուզմինայի հետ, և երեք տարի անց՝ 1926 թ., Աուեզովն ամուսնանում է երրորդ անգամ: Նրանց ամուսնության պաշտոնական գրանցումը լինում է 1936 թ. հուլիսի 5-ին Ալմաթիի՝ այն ժամանակ միակ ՔԱԳԿ-ում: Այս մասին մանրամասն տես Ауэзова Л., Ауэзов в воспоминаниях современников, Амматы, 1997, стр. 374-375; 380:

[3] Ղազախստանում խորհրդային կարգերը հաստատվել են 1917-1918 թթ.: Այս մասին մանրամասն տես Артыкбаев Ж., История Казахстана, Астана, 2004:

միջով՝ ֆեոդալիզմի, կապիտալիզմի և սոցիալիզմի: Եվ հիմա, իմ հայրենիքի յուրաքանչյուր քաղաքացու նման ես մասնակիցն եմ կոմունիզմի կառուցմանը: Ինձ թվում է, որ որոշ իմաստով ես կարող եմ համարվել մարդ-ուղեցույց, ում պատանեկության և ներկայիս միջև ձգվում են դարեր: Ես եկա 20-րդ դար կարծես հեռվից, անգամ ոչ թե եվրոպական, այլ ասիական միջնադարից՝ինձ հետ բերելով այն ամենը, ինչ տեսել, ապրել և զգացել եմ››[4]:

1920-ականների սկզբին Ղազախստանում քաղաքական մտքի ասպարեզում սկսում է որոշիչ դեր զբաղեցնել ազգային գաղափարախոսությունը, որը պայմանավորված էր հատկապես հեռավոր տափաստաններ հասած 1917 թ. հեղափոխական ալիքով. ղազախ ժողովրդի մտավորականության ներկայացուցիչների սերուցքը (Ա. Բոկեյխանով, Ա. Բայտուրսինով, Մ. Շոկայ, Մ. Տընըշբաև, Մ. Դուլատով, Խ. և Ժ. Դոսմուխամեդժանովներ, Է. Երմեկով, Ժ. Ակբաև, Խ. Ղաբասով), ոգևորված հեղափոխության ընձեռած հնավորություններից, 1917 թ. հուլիսին ստեղծել էր «Ալաշ» կուսակցությունը[5], իսկ արդեն 1917 թ. դեկտեմբերին հռչակել ինքնավարություն (այն գոյատևում է մինչև 1920 թ.)[6]: «Ալաշ» կուսակցության հիմնադիրները ժամանակի առաջադեմ ղազախ մտավորականներն էին, գրողներ, բանաստեղծներ, ովքեր նաև իրենց ավանդն ունեցան ոչ միայն քաղաքական կյանքի, այլ նաև մշակույթի և մասնավորապես գրականության, հրապարակախոսության զարգացման գործում: Բնականաբար, ինչպես կուսակցության ստեղծումը, այնպես էլ ինքնավարության հռչակումն իրենց ուղղակի ազդեցությունն են թողում երիտասարդ Աուեզովի աշխարհայացքի ձևավորման վրա՝ պայմանավորելով նրա կյանքի որոշ առանցքային դրվագներ: Ավելին, 1920-ականները կարելի է համարել Աուեզովի կյանքի ամենաբուռն շրջանը: Հատկանշական է, որ խորհրդային գրականագիտության մեջ նրա կյանքի այս տարիների (1917-1919 թթ.) ուսումնասիրությունը որոշակիորեն մնացել էր ստվերում. հիմնական շեշտադրումն արվում էր 1917 թ. «բեմադրված» Ենլիկ-Քեբեք պիեսին և միանգամից անցում էր կատարվում արդեն 1921 թ. գրված «Անօգնականների ճակատագիրը» ստեղծագործությանը, որը հեղինակը գրել էր արդեն խորհրդային իշխանությունների օրոք Հեղափոխական

[4] Каратаев М., Ауэзов Мухтар, Алма-Аты, 1967, стр. 6.
[5] Алаш және тарих: Ғылыми жинақ, бас ред. М. Ғ. Ескендіров, Семей, 2017, бет 74.
[6] Այս մասին մանրամասն տես Жұтбай Т. , Движение Алаш (3-х томных сборник документов и матриалов), Алматы, 2011; Мартыенко А., Алаш –орда: сборник документов, Алма-Ата, Айкап, 1992.

կոմիտեում աշխատելու տարիներին: Այսինքն՝ բաց էին թողնվում սկզբունքորեն կարևոր երեքից չորս տարիները, երբ Աուեզովը զբաղված էր բուռն հասարակական-քաղաքական գործունեությամբ, մասնավորապես «Ալաշ»-ի տպագիր օրգաններում նա հրատարակում էր հոդվածներ և զբաղվում էր հրապարակախոսությամբ: Ավելին, մենք վստահ ենք, որ այս շրջանում գրված նրա հոդվածները սկզբունքորեն կարևոր են բազմակողմանիորեն քննելու համար նրա 1920-ականների ստեղծագործությունները, հասկանալու և գնահատելու Աուեզովին՝ ոչ միայն որպես գրող, այլ նաև որպես հասարակական գործիչ և մտավորական, ով կանգնած էր ազգային գաղափարախոսության ձևավորման ակունքներում:

Հետևաբար, եթե Աուեզովի կյանքը պայմանականորեն բաժանենք շրջանների, ապա այս ժամանակահատվածը՝1917-1919 թթ., կարելի է համարել Աուեզովի՝ որպես քաղաքացի և որպես հրապարակախոս ձևավորման և կայացման շրջան: Ամենատարբեր թերթերում և ամսագրերում նա հանդես է գալիս մի շարք հոդվածներով, որոնք վերաբերում էին ինչպես երկրի հասարակական-քաղաքական, այնպես էլ մշակութային կյանքին և գրականագիտությանը:

Կարելի է վստահաբար փաստել, որ տարված ղազախական առաջադեմ միջավայրում տարածվող ազգային գաղափարներով ու «Ալաշ» կուսակցության ստեղծմամբ՝ երիտասարդ Աուեզովն ուղղակի մասնակիցն է դառնում ազգային գաղափարների մշակման և տարածման գործընթացին: Նախ 1917 թ. նա հիմնում է «Ալաշի երիտասարդություն» համաղազախստանյան երիտասարդական միությունը: Չբավարարվելով միայն միության ստեղծմամբ՝ Աուեզովը սկսում է հրատարակել առաջին հոդվածները. նախ դեռևս 1916 թ. Տաշքենդում հրատարակվող «Ալաշ» թերթում 1917 թ. մարտի 30-ին 16-րդ համարում հրատարակվում է «Սեմեյի սեմինարիայում սովորող Աուեզովի և Այմաուլտի» համատեղ «Қазақтың өзгеше мінездері» հոդվածը: Հոդվածում հեղինակները, անդրադառնալով ղազախների շրջանում բացասական երևույթներին, ներկայացնում են դրանց ձևավորման պատմական հենքն ու ցույց տալիս կրթության ճանապարհով անցյալի այս էջը հաղթահարելու ճանապարհը[7]:

1917 թ. մայիսից 1919 թ. մարտ ամիսներին Սեմեյում լույս տեսնող «Սարբարկղա» շաբաթաթերթը, որը ևս համարվում էր Ալաշ-Օրդայի տպագիր օրգանը, հրատարակում է Աուեզովի՝ «Оқудағы құрбыларыма» (1917 թ. սեպտեմբերի 14-ի համարում), «Қайсасын қолдамыз?» (1917 թ.

[7] Мұхтар Әуэзов, Энциклопедиясы, бас ред. С. Қасқабасов, Атамұра, Алматы, 2011, б. 69.

հոկտեմբերի 9-ի համարում) հոդվածները[8], որտեղ ևս խոսում է հասարակական խնդիրների մասին: Մասնավորապես, «Оқудағы құрбыларыма» հոդվածում նա խոսում է երիտասարդների շրջանում վաղ տարիքից միասնականություն, համերաշխություն սերմանելու, նրանց կրթելու մասին և կարևորում արդեն կարդացած, ուսյալ մարդկանց դերն այդ գործում[9]: Իսկ արդեն «Қайсасын қолдамыз?» հոդվածում հստակ երևում է Աուեզովի մոտեցումները ազգային կրթության հարցում. «Այսօր մեր ամենամեծ պահանջմունքներից ամենակարևորը գիտությունն է: Համաձայն եմ, մեր վիճակը, Փառք Աստծո, շատ վատ չէ: [Սակայն] Քիչ են ուսյալ այն ղազախները, ովքեր քիչ թե շատ ջանքեր են գործադրում գիտությունը ժողովրդին հասցնելու ուղղությամբ … Սակայն այս գործն իրականացնելու համար կա երեք պարտադիր պայման. նախևառաջ նպատակ/մտադրություն է պետք, ապա ուժ է պետք, և երրորդը՝ դաստիարակություն է պետք: Այս ուղղությամբ միակ բանը, որ կարող ենք անել հիմա, սովորելն է: Կարելի է ասել, որ սովորելու մասով վերը թվարկված երեք պայմաններից առաջին երկուսը մեզ մոտ կա, բայց չկա երրորդը: Եթե վերցնենք մուսուլմանական մեդրեսեներն ավարտած ուսուցիչներին և սեմինարիան ավարտած ուսուցիչներին, ապա բոլորի մոտ էլ կա ղազախ երեխաներին կրթելու ցանկությունը: Երկրորդ, նրանք ներուժ ունեն, բայց չկա տեղին կազմակերպող կրթություն: Իսկ ո՞րն է այդ նախընտրելի դաստիարակությունը/կրթությունը: … Ինչ վերաբերում է ղազախական [դպրոցներին], ապա դպրոցին վերաբերող գեթ մեկ գիրք չկա: Պատճառը – գիտական լեզուն է [լեզվի բացակայությունն է]: Գիտական լեզվին ղազախերենը չի հերիքում: Մեզ համար այսօրվանից արդեն սկսած պետք է բարձրաձայնել գիտական/ուսման լեզվի հարցը ու ինչ-որ ձևով լուծել այն: Այս մասով պետք է, որ ոչ թե ռուսերեն կարդացողը իր մեթոդները, իսկ իսլամական լեզվով կարդացողը իր մեթոդները գործածի, այլ պետք է իսկապես համեմատել և ընտրել այն լեզուն, որն ավելի հարմար է և ավելի լավ է պատկերում ղազախական կյանքը: Ի վերջո, կստացվի այնպես, որ չենք ունենա [միայն] իսլամական լեզվով կարդացողներ, և [միայն] ռուսերեն կարդացողներ, այլ այս երկուսը կհամաձայնեցվեն ու զարգացման միևնույն ճանապարհը կբռնեն»[10]:

Մեկ տարի անց՝ 1918 թ., Օմսկում տեղի է ունենում «Համաղազախստանյան երիտասարդական միության» առաջին նիստը:

[8] Նույն տեղում, էջ 526:
[9] Алаш және Семей баспасөзі, Ғылыми жинақ, бас ред. Ескендіров М., Семей, 2017, бет 37-38.
[10] Նույն տեղում, էջ 47-48:

Այս ժողովի մասին Աուեզովը պատմում է «Աբայ» թերթի 1918 թ. 6-րդ համարում: Այստեղ նա շարադրում է այս կառույցի ստեղծման նպատակների մասին. «Ժողովի կազմակերպիչները Օմսկի երիտասարդական «Бірлік» միությունն էր: ...նպատակը հայտնի է բոլորին. ազատության ու ժողովրդի թշնամի բոլշևիկյան իշխանությունը ծաղկում է ապրում և նպատակ ունի զրկել ժողովրդին իր հիմական ուղղուց, իր հիմնական նպատակից: Իր հռչակած գաղափարներից շեղվող բոլշևիկների նկատմամբ ղազախ ղեկավարությունը ցուցաբերեց հնազանդություն և չկարողացավ դիմադել: Արդյունքում շատերը հետապնդման ենթարկվեցին: Բայց յուրաքանչյուր ազգասեր քաղաքացու պարտքն է ցույց չտալ իր իշխանության չգոյությունն ու ամեն ինչ անել, որ ժողովրդի իշխանությունն ամրապնդվի»[11]:

Այս ժողովի ընթացքում Աուեզովն ընտրվում է Կենտրոնական կառավարման հանձնաժողովի անդամ, ակտիվորեն մասնակցում է «Երիտասարդ քաղաքացի» Համաղազախստանյան երիտասարդական միության համանուն թերթի («Жас азамат» 1918 թ. 20 հուլիս-1919 թ. 2 փետրվար, Պետրոպավլոսկ) աշխատանքներին, որը ևս Ալաշ օրդայի շարժման գաղափարախոսության տպագիր օրգանն էր: «Երիտասարդ քաղաքացի» թերթում 1918 թ. հոկտեմբերին 23-ի համարում նա հրատարակում է «Ескеру керек» հոդվածը[12], որտեղ հանդես է գալիս ցարական իշխանության նկատմամբ բացահայտ քննադատական դիրքերից, խոսում է ժողովրդի շրջանում ազգային ինքնագիտակցության ձևավորման անհրաժեշտության մասին՝ դատապարտելով ամեն ինչին հնազանդվելու ղազախների կենսակերպը:

Նույն՝ 1918 թ., Սեմապալատինսկ քաղաքում գրող, հրապարակախոս Ժուսուպբեկ Այմաուբտովի (1989-1931 թթ.) հետ Աուեզովը հրատարակում է «Աբայ» գրականագիտական ամսագիրը, որտեղ հրատարակվում են նաև գիտահանրամատչելի հոդվածներ, ինչպես նաև նյութեր սոցիալական թեմաներով, որոնք ուղղված էին ազգային հիմքով ժողովրդավար հասարակություն ստեղծելուն[13]: Ամսագրում հրատարակվում էին հոդվածներ, որոնք ներդաշնակ էին Ալաշի ազգային գաղափարախոսությանը, ուղղված էին երիտասարդների շրջանում քաղաքացիական գիտակցության բարձրացմանը, ժողովրդի շրջանում լուսավորության և կրթության տարածմանը («Ғылым», «Мәдениетке қай кәсіп жұық», «Қазақ ішіндегі партия неден?», «Философия жайынан», «Бірінші жалпы жастар сьезі», «Жастар ұйымына ашық хат»,

[11] Նույն տեղում, էջ 243:
[12] Мұхтар Әуэзов, Энциклопедиясы, бас ред. Қасқабасов С., Атамұра, Алматы, 2011, б. 278.
[13] Мұхтар Әуэзов, Энциклопедиясы, бас ред. Қасқабасов С., Атамұра, Алматы, 2011, б. 17.

«Қазақ әйелі», «Қазақ қашан жетіледі?», «Земство мен корпоратив қаумдары», «Мәдениет һәм ұлт», «Оқу ісі», «Өліп таусылу қаупы»): Այս ամսագրում առաջին անգամ Աուեզովը հրապատարկում է նաև իր գրականագիտական հոդվածները, մասնավորապես «Қазақ әдебиетінің қазіргі дәуры», «Будда», «Абайдың өмірі мен қызметі», «Япония», «Ғылым тілі», «Қазіргі қазақ күйі» հոդվածները:

Թեև ընդամենը 12 համարից հետո «Աբայ» ամսագիրը փակվում է, սակայն հարկ է նշել, որ այն դրական ազդեցությունն է ունենում երիտասարդ գրողի աշխարհայացքի ձևավորման վրա: Ժամանակակից ուսումնասիրող Տուրսուն Ժուրտբայն իրավացիորեն նշում է, որ այդ ժամանակ արդեն Աուեզովը կայացել էր որպես հասարակական գործիչ, և խորապես գիտակցում էր կատարվող փոփոխությունները, ժամանակի դժվարությունները, որի ապացույցն է համարում նրա՝ «Ուսանող-ընկերներիս» նամակը[14]:

Աուեզովը խորապես հասկանում էր, որ պետք է գործել ըստ նոր ստեղծված քաղաքական իրավիճակի: Իհարկե, նա հասկանում էր նաև, որ մի ժողովրդի համար, որը երկար ժամանակ զրկված է եղել անկախությունից, ինքնավարության ստեղծումը լավ հնարավորություն էր զարգանալու: Հետևաբար, ստանալով իշխանության եկած նոր՝ բոլշևիկյան կառավարության հետ աշխատելու հրավեր՝ Աուեզովը, այնուամենայնիվ, այն ընդունում է: 1919-1922 թթ. կարելի է համարել նրա կյանքի երկրորդ կարևոր շրջանը, երբ ամբողջությամբ նվիրել էր հասարակական-քաղաքական գործունեությանը: Այս ընթացում նա ավարտում է Սեմապալատինսկի ուսուցչական սեմինարիա-դպրոցը (1919 թ.)[15] և 1919 թ.-ից աշխատանքի է անցնում Սեմապալատինսկի նահանգի հեղափոխական կոմիտեի ղազախական բաժնում, որը ղեկավարում է 1920 թ.: 1921 թ.-ից աշխատում է Սեմապալատինսկի մարզային հեղափոխական կոմիտեում, իսկ նոյեմբերից զբաղեցնում է քարտուղարի պաշտոնը՝ միաժամանակ լինելով ՂԽՍԻՀ Կենտրոնական գործադիր կոմիտեի անդամ: Իհարկե, փոխվել էին կարգերն ու իշխողները, սակայն Աուեզովը չէր կարող դավաճանել ընտրած գաղափարները և նոր պաշտոններ ստանալով՝ նա այսպես թե այնպես փորձում էր առաջ քաշել ինչպես հասարակ ժողովրդին հուզող տնտեսական, այնպես էլ ազգային քաղաքականությանը վերաբերող

[14] Տես Журтбаев Т., Мухтар Омарханович Ауэзов (историко-биографический очерк), Анкара, 1997, стр. 9.

[15] Դպրոցում սովորելու տարիներին Աուեզովը գրում է բանաստեղծություններ, սակայն ժամանակի ընթացքում դադարում է ստեղծագործել չափածոի ժանրում: Տես. Каратаев М., Мухтар Ауэзов : Заметки о творчестве, 1967, Алма-Ата, стр. 9.

հարցեր: Ոստի նոր իշխանությունների հետ համագործակցելով՝ Աուեզովը շարունակում էր արտահայտել իր դժգոհությունը երկրում վարվող ներքին քաղաքականությունից: 1921-1922 թթ. նա քննադատում է ղազախական մտավորականության նկատմամբ Մոսկվայի գաղափարական հետապնդումներն ու տնտեսական ճնշումները: Ավելին, 1922 թ. մարտի 7-ին ՂԽՍՀ Կենտրոնական գործադիր կոմիտեի անդամ, գրող Սմագուլ Սադվակասովի հետ համատեղ հանդես է գալիս բոլշևիկյան քաղաքականության քննադատությամբ, և ՌԿԿ Կենտրոնական կառավարման խորհրդի նախագահ Վ. Գ. Յուդովսկուն ուղղված նամակում առաջ են քաշում քաղաքական, տնտեսական և սոցիալական կյանքին վերաբերող պահանջներ: Մասնավորապես, նրանք պահանջում էին ազգային ինքնուրույնություն, սովի վերացում, ղազախներից խլված տարածքների վերադարձ, արտադրության մեջ ղազախների ներգրավվածության ապահովում, ղազախերենի՝ պետական լեզվի հռչակում, ազգային կրթության, գիտության և տպագրության զարգացում[16]: Սրա հետևանքը լինում է այն, որ 1922 թ. մարտի 11-ին երկու հեղինակներին հռչակվում են «ազգայնական-ալաշօրդացիներ», և սկսվում է նրանց նկատմամբ իշխանությունների ուղղակի հետապնդումները:

Ինչպես նկատում է Տ. Ժուրտբայը՝ 1922 թ. Աուեզովը, հիասթափված իշխանությունների չկատարված խոստումներից, հեռանում է պետական համակարգում զբաղեցրած պաշտոններից և իրեն նվիրում մանկավարժական և գրականագիտական գործին[17]: Այս ընթացքում նա զուգահեռ ուսանում է Տաշքենդի Միջինասիական պետական համալսարանում, ապա Լենինգրադում և ապա ավարտում ասպիրանտուրան: Մեր խորհին համոզմամբ՝ նրա մեկնումը երկրից պայմանավորված էր որքան նրա անձնական հիասթափությամբ, այնքան էլ իշխանությունների՝ նրան պետական-քաղաքական-հասարակական գործունեությունից հեռացնելու ձգտման հետ: Ակնհայտ է, որ Աուեզովի նկատմամբ սկսվել էր ուղղորդված հակաքարոզչություն և դրա մասին կենտրոնական իշխանություններին հասցվում էին տեղեկություններ: Ավելին, խորհրդային շրջանում ղազախ գրականության բոլոր ուսումնասիրողներն առանց բացառության շատ թռուցիկ էին անդրադառնում նրա կյանքի այս դրվագին (1918-1922 թթ.)՝ ընդգծելով, որ այս շրջանում նա թերթերում սկսել էր տպագրել իր եզակի

[16] Неизвестное в наслествии Мухтара Ауэзова, гл. ред. Абдулло С., Алматы, 2013, стр. 24-27.
[17] Журтбаев Т., Мухтар Омарханович Ауэзов (историко-биографический очерк), Анкара, 1997, стр. 11.

ստեղծագործությունները: Այսպիսի մոտեցում կարելի է տեսնել Մ. Կարատաևի, Զ. Ահմեդովի, Ե. Լիզունովայի և այլոց աշխատանքներում[18]:

Ավելին, բնավ էլ պատահական չէր, որ Աուեզովի նկատմամբ ոչ իրավացի և սուբյեկտիվ մեկնաբանությունները գերիշխող էին հատկապես 1930-ականների կեսերին, երբ ստեղծագործողների աշխատանքները ուսումնասիրվում և քննադատվում էին ժամանակի իշխող գաղափարախոսության շրջանակներում: Աուեզովի կյանքի այս և հետագա մի քանի տարիներին գրված մի քանի ստեղծագործությունների ծնունդը (1918-1925 թթ.) ներկայացվում է որպես «հեռացում/շեղում ճիշտ ուղուց»[19]: Մասնավորապես Մ. Կարատաևը նշում է. «Ընկնելով բուրժուական ազգայնականության և անորոշ ռոմանտիկական մտացնորքների մեջ՝ նա գրեց «Քարազյոզ» պիեսն ու «Դժվար տարիներ» վիպակը, որտեղ ներկայացվում էր խեղված իրականությունը»[20]:

Ինչպիսին էլ լիներ նրա «մեկուսացման» պատճառները, այնուամենայնիվ դրա դրական կողմերից կարելի է համարել այն, որ Աուեզովն այսպիսով ունենում է հնարավորություն և ժամանակ զբաղվելու գրական ստեղծագործություններով. այս շրջանը՝ 1923-1929 թթ., կարելի է համարել ստեղծագործական կյանքի մյուս և ամենաակտիվ շրջանը: Հենց այս տարիներին են գրվում Աուեզովի տասնյակի հասնող պատմվածներն ու վիպակները:

Հետևաբար, կարող ենք փաստել, որ 1917 թվականից Աուեզովն ապրում էր բուռն և անհանգիստ կյանքով. անձնական կյանքում վերելքներն ու վայրէջքները, ինչպես նաև հասարակական-քաղաքական գործընթացներում նրա ակտիվ մասնակցությունը, դրա հետևանքով նրա նկատմամբ սկսված գաղափարական ճնշումները փաստում են, որ այս ընթացքը նրա հետագա կյանքի համար եղել է կարևորագույն շրջաններից մեկը: Հեղափոխական ալիքով տարված երիտասարդ Աուեզովը դառնում է ղազախների շրջանում ազգային գաղափարախոսության առաջին մշակողներից և տարածողներից մեկը: Գտնվելով Սեմեյ քաղաքում, որտեղ կենտրոնացած էր ղազախ մտավորականությունը, նա դառնում է 20-րդ դարասկզբի երկրում տեղի ունեցող հասարակական-քաղաքական գործընթացների անմիջական մասնակիցը. նրա ջանքերով ձևավորվում է «Ալաշի երիտասարդություն»

[18] Տես Ахметов З., Художественное мастерство М. Ауэзова, Алматы, стр. 262-264 .

[19] Нұрқатов А., Мұхтар Әуэзов, Монографиалық очерк, Қаза қтың мемлекеттік көркем әдебиет баспасы, Алматы, 1937, б. 5-6.

[20] Каратаев М., Казахская литература. Сборник статей, Москва, 1960, стр. 118.

համաղազախստանյան երիտասարդական միությունը, ստեղծվում է «Աբայ» ամսագիրը, ժամանակի թերթերում տպագրվում են նրա հոդվածները, որոնք ուղղված էին ղազախների շրջանում ազգային ինքնագիտակցության բարձրացմանը, կրթված հասարակություն ստեղծելուն և ինքնավարության ձևավորմանը: Ղազախստանի խորհրդայնացումից և Ալաշ շարժման դադարեցումից հետո Աուեզովն անցնում է պետական աշխատանքի նոր իշխանությունների հետ համագործակցելով՝ չվախենալով քննադատել իշխանությունների՝ ղազախների շրջանում իրականացրած ներքին քաղաքականությունը: Արդյունքում 1922 թ. հեռացվում է զբաղեցրած պետական պաշտոնից և իրեն ամբողջությամբ նվիրում գրականությանը և ինքնակրթությանը:

ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ МУХТАРА АУЭЗОВА (ПЕРИОД С 1917 ДО СЕРЕДИНЫ 1920-Х ГОДОВ)

Шушан Хачатрян

(Резюме)

В статье рассматривается общественно-политическая деятельность казахского писателя М. Ауэзова с 1917 до середины 1920-х гг. В частности, были изучены его отношения с представителями власти и членами движения «Алаш», а также его выступления и статьи, опубликованные в различных журналах и газетах.

SOCIAL AND POLITICAL ACTIVITY OF MUHTAR AUEZOV (FROM 1917 TO THE 1920s)

Shushan Khachatryan

(Summary)

The article examines the social and political activity of M. Auezov, a Kazakh writer, in the period from 1917 to the 1920’s. In particular, we pay attention to his relations with representatives of the authorities and members of the Alash Movement, as well as his speeches and articles published in various magazines and newspapers.